# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

N 26 – Ա

30 հունվարի 2018 թ.

## «ԼՃԱՇԵՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 197-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգի» 6-րդ և 7-րդ կետերը՝

*որոշում եմ՝*

1. Հաստատել 2018 թվականի հունվարի 31-ին, ժամը 11$^{00}$-ին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Լճաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի կազմը՝ Նիկոյան Արտաշես (մարզպետի տեղակալ), Պողոսյան Անուշ (մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ), Մուշեղյան Յուրա (մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ), Մնացականյան Վարդանուշ (մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի վարիչ), Մանուկյան Արմեն (մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի վարիչ) Խաչատրյան Վիգեն (մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի վարիչ), Ղազարյան Նորիկ (Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ):

2. Մրցութային հանձնաժողովի նախագահ նշանակել Արտաշես Նիկոյանին, քարտուղար՝ Յուրա Մուշեղյանին:

3. Հանձնաժողովի գործունեությունները համարվում են դադարեցված մրցույթի ավարտին:

ՄԱՐԶՊԵՏ՝

ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ